ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2015թ. թիվ 391-Ա

ՊԵՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՎԱԾ
ԼԻՆԵԼՈՒ ՓԱՍՏԸ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2004թ. ապրիլի 30-ի թիվ 102-Ա որոշումը և հաշվի առնելով Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Թորոսյան 5/7 հասցեի բնակիչ Կ.Զոբանյանի դիմումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատված համարել ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Թորոսյան 5/7 հասցեի պետական բնակարանը քաղաքացիներ Կարինե Սուրիկի Զոբանյանի, Սուսաննա Գրիգորի Լամբարյանի և Դավիթ Գրիգորի Լամբարյանի անվամբ՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն մասնավորեցված լինելու փաստը:

2. Օրդեր ստացած քաղաքացիների հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ նվիրատվությամբ ծագող իրավունքները ենթակա են գրանցման Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2015թ. դեկտեմբերի 18
ք.Վանաձոր